ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՍ ԹԻ ԷՅ-Ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	Էս թի էյ	Կոստյում՝ ամառային, ՍՁ գունաքողարկմամբ, կեպիով, զինվորի /Լրակազմը բաղկացած է բաճկոնից, տաբատից, կեպիից, թևքանշաններից, կրծքանշաններից և ուսադիրներից/: Ամառային կոստյում կեպիով, զինվորական, բամբակյա, գունաքողարկման թելի C-8061 արտիկուլի (կամ համարժեք), ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հաստատված գունավորմամբ (երկգույն քողարկող կտոր), մակերեսային խտությունը 235-240 գր/մ2, բաղադրությունը՝ 35% բամբակ, 65% պոլիէսթեր, (թույլատրվում է բամբակի պարունակությունը շատացնել մինչև 50%) բաղադրությամբ, փափկեցված (ցանկալի է հրակայուն նյութերով ներծծվածք) գործվածքից է: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման, թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնը միալանջ, կոճկվում է գաղտնի, կենտրոնական կոճկվածքով 6 օղակ կոճակներով, որից վերևից առաջին կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով, իսկ 5 օղակ կոճակները գաղտնի կենտրոնական կոճկվածքով: Բաճկոնն ունի ծոծորակի հատվածում 5,5-6,2սմ լայնությամբ , և առաջամասում սրվող՝ 7,5-8,5սմ լայնությամբ ուղղանկյունաձև ծալովի վերնաշապիկային օձիք: Օձիքի միացման կարում,թիկունքում, ներսից մշակված է կախիչ: Բաճկոնի առաջամասը և

		փեշամասերը ուղիղ ձևացքով, տաբատի մեջ դնելու հնարավորությամբ: Թևատակերին առկա են կանաչ գույնի հովացման, օդափոխման եռանկյունաձև ցանցեր: Բաճկոնի առաջամասի կրծքամասում /կոկետկայի տակ/ մշակված են ծավալային, վրադիր երկու գրպաններ կափույրներով, որոնք տեղակայված են կրծքամասում, կենտրոնական ուղղահայաց կարերից 1.5-2,5սմ հեռավորության վրա: Կրծքամասի գրպանի լայնությունը 14-14,5սմ, խորությունը 14,5-16,0սմ, կափույրը 6,7-7,2սմ: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5սմ լայնությամբ կարով, որոնց անկյունները շեղ կտրվածքներով են: Ձախ գրպանի կափույրի մեջտեղում, ներսամասից նախատեսված է գրիչների համար գրպանիկ, 4.5սմ լայնությամբ կտրվածքով: Առաջամասի գրպանները կոճկվում են գաղտնի կոճկվածքով 4 օղակ կոճակներով: Առաջամասի աջ գրպանի կափույրից 0.5մմ վերևը կարով ամրացվում է «ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ» ասեղնագործ կրծքանշան, իսկ ձախ գրպանի վերևին ամրացվում է 12.8x2.8սմ ձևաչափի ասեղնագործ, կպչուն ժապավենով «ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ» գրառմամբ կրծքանշան: Բաճկոնի հետևամասը բաղկացած է կոկետկայից և հետևամասից, որի երկու կողմերում ` կոկետկայից դեպի ներքև, մշակվում է 3սմ լայնքով կողային, ծավալային ծալքեր: Ձևվածքը ապահովում է թևերի ազատ շարժը: Գոտկատեղում ներսից 3,5-4 սմ լայնքով, աստառի հետ, մշակվում է կտոր գաղտնի գոտու համար, որի միջով անցկացվում է կարգավորվող էլաստիկ ժապավեն ռեզին, որը ներսից կոճկվում է 2 հատ պլաստմասե կոճակով: Թևքերին տեղադրվում են շեղ կտրվածքներով կափույրներ, որոնք ունեն առաջամասում ծավալուն, վրադիր գրպաններ (լայնությունը 14սմ, խորությունը 15սմ, կափույրը 6,-6,5սմ) , որոնք կոճկվում են զույգ կոճակներով՝ գաղտնի կոճկվածքով: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ՝ 15 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5սմ լայնությամբ կարով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են, լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև /անկյունները շեղ կտրվածքով/ արմնկակալներ, որոնք 12-13սմ լայնքով սկսվում են արմունկի վերևի հատվածից և շարունակվում մինչև բազկակալների բացվածք: Թևքերի ներքևի մասում մշակված են պատաններ, որոնք բազկակալում կոճկվում են կոճակ օղակով: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Ձախ թևքի վրադիր գրպանի կենտրոնում կարվում է «ՀՀ ԱԱԾ» թևքանշանը, իսկ աջ թևքի վրադիր գրպանին՝ «ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ» թևքանշանը: Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև կտրվածքով

		պատաններ, որոնք բազկակալում կոճկվում են մեկ կոճակ օղակով: Ուսերի վրա տեղադրված են (5սմ * 9սմ չափսի) ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկական կոճակ օղակով: Աստառը դեղնականաչավուն կամ դարչնագույն, բամբակյա /բիազ 120 գր/մ2/ գործվածքից է, ձգվում է ուսերից թիկունքի հատվածում՝ մինչև կոկետկա և կրծքավանդակի հատվածում՝ մինչև գոտկատեղի գաղտնի գոտի: Աստառի ձախ կրծքամասում մշակված է աստառացու կտորով 14,0*16,0սմ չափսի վրադիր ծոցագրպան, որը կոճկվում է 15մմ տրամագծով կոճակով և օղակով: Տաբատը ուղիղ ձևվածքով է, ազատթող փողքերով կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը կոճկվում է 1 հատ գոտու վրա 18մմ կոճակով սովորական կոճկվացք, և 4 հատ 14-15մմ կոճակով բացվածքի վրա՝ փակ գաղտնի կոճկվածքով (16-17,5սմ բացվածք՝ ըստ չափսերի), կոճակ օղակներով: Տաբատի կոնքային հատվածի ձևը թույլ է տալիս մարտիկին ազատ շարժումներ կատարելը և առաջամասի գրպաններից օգտվելը: Տաբատի դիմացից լայն բացվածքը ապահովում է հեշտ և արագ հագնելը: Տաբատի հետևամասում մշակվում են 2 հատ կափույրով (անկյունները՝ շեղ կտրվածքով), վրադիր գրպաններ՝ գրպանի լայնությունը 13սմ, խորությունը 14-15սմ: Վրադիր կափույրները 5,5-6,0սմ լայնքով, անկյունները՝ շեղ կտրվածքով, փակ, գաղտնի կոճկվող, կոճակի տրամագիծը՝ 18մմ : Նստատեղի հատվածում մշակվում են լրացուցիչ զարդակարերով օվալաձև երկտակ նստատեղային գործվածք: Գուլֆիկը՝ գոտու աջ և ձախ հատվածներում, ներսից ունի 10-12 սմ երկարությամբ, 3սմ լայնքով ռեզինային, գոտու չափը կարգավորող էլաստիկ հատվածներ (չորս կարանոց շիպլետ) : Գոտին 5.2-5.5սմ լայնությամբ է որի վրա մշակված է 8 հատ 1.2-1.3սմ լայնքով և 5.0 սմ բացվածքով կամրջակներ: Հետևի մասի 2 կամրջակները ամրակարված են և ավելի լայն են՝ 2,0սմ , որպեսզի ապահովեն՝ կախոցի և պարանի միջոցով, քաշելով, մարտիկի դուրս բերումը կրակի գոտուց: Տաբատին՝ գոտկատեղից ներքև, կողքերից թեք ներկարված են 17-18սմ բացվածքով, գրպանի ստորին եղրից հաշված 16-17սմ խորությամբ աջ և ձախ գրպաններ (140-160գր/մ2 բյազ): Կողային գրպանների ստորին բացվածքից 2 սմ ներքևից, կողքերից, 2 հատ կափույրով վրադիր, եռածալ, ծավալուն գրպաններ են: Կողային գրպանների կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասը կոճկվող է և կոճկվում են գաղտնի կոճկվածքով, մեկական կոճակ օղակներով: Գրպանի լայնությունը ստորին հատվածում 19-20 սմ, իսկ վերին բացվածքում 21սմ, խորությունը 21 - 23սմ (ըստ չափս-հասակի), եռածալ, ծալքերի լայնությունը 5սմ, հետին

		հատվածում ծավալային (ապահովում է 4սմ ծավալային բացվածք): Տաբատի առաջամասում՝ ծնկներին, մշակվում են վրակարված, քառանկյուն ծնկակալներ: Տաբատի փողքերի ծալքի մեջ մշակվում է սև գույնի էլաստիկ, ռետինային ժապավեն , չափսը կարգավորելու համար, որոնց հանգուցված ծայրերը (4սմ) դուրս են գալիս ծալվածքի ներսամասում արված անցքերից՝ միմյանց կապելու համար: Տաբատի փողքերը ծալված միակար կարված են: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 18մմ և 15մմ տրամագծի, պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ դեղնականաչավուն կամ դարչնագույն պաշտպանական: Կեպին աստառով է, կազմված է կոշտ 1,8-2,3մմ հաստությամբ և 6,0-7,0սմ լայնքով պոլիմերային հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասը ներսից պարուրված է 2,6-2,8սմ լայնքով նույն քողարկող կտորով, միջնամասը և հատակը մշակվում են սոսնձային կտորից միջադիրով և դեղնականաչավուն գույնի (բաճկոնի մեջ օգտագործված տեսակի) աստառով: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական կամ դարչնագույն գույնի պլաստմասե, չափսի կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Ճակատային մասին տեղադրված է 3,0-3,2 սմ լայնությամբ երկտակ կտորից կարված գոտի, 5մմ զարդակարով: Հատակին տպագրական ներկով դրոշմվում է կեպիի չափսը (54-62 չափսի): Թևքանշաններ և կրծքանշաններ: Կրծքանշան «ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ» պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ձգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի «ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ»: Տառի բարձրությունը՝ 10մմ, լայնությունը՝ 6սմ, իսկ պատի հաստությունը 2մմ: Կրծքանշանի պատրաստի չափսերը 12.8սմx2.8սմ: Ժապավեն «ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ» պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ձգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի «ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ» նշումները, համաձայն պատվիրատուի կողմից տրամադրված սանդղակի: Տառի բարձրությունը՝ 15մմ, լայնությունը՝ 13սմ, իսկ պատի հաստությունը 2.8մմ: Կրծքանշանի պատրաստի չափսերը 12.8սմx2.8սմ: Կրծքանշանի տակի շերտին տեղադրվում է ինքնակպչուն ժապավեն /լիպուչկա/: Թևքանշաններ «ՀՀ ԱԱԾ» և «ՀՀ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

Номер лота	наименование производителя	Предлагаемый товар технические характеристики
5	СТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՏՏվ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2 ниже представляет полное описание предлагаемого им товара.	ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՁՈՐՔԵՐ» պատրաստվում են թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ձգվող ջրակայուն շերտով, եզրերը՝ «մեռոու» շրջանակով, սահմանված ձևի՝ ասեղնագործությամբ կամ ջակկարդ գործվածքով, պատկերն արտահայտիչ ու գրվածքը ընթեռնելի, մուգ կանաչ գույնի թելերով: Թևքանշանների պատրաստի չափերը 8.3սմx8.3սմ: Տարբերանշանների արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշների՝ ՀՀ կառավարության 2018թ. սեպտեմբերի 17-ի N 1217-Լ «ՀՀ ազգային անվտանգության մարմինների զինծառայողների միասնական համազգեստը և տարբերանշանները հաստատելու մասին» որոշման: Պիտակավորումը: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 5 սմ բարձրության վրա, տաբատի գոտու ստորին հատվածում, ներսի կողմից պետք է ամրացված լինի համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ (գրվածքները լվացքի նկատմամբ՝ գունակայուն, ընթեռնելի) (4սմ*6սմ), որի վրա պետք է նշված լինի. արտադրող կազմակերպության անվանումը, պայմանագրի կոդը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն (գրավոր և սիմվոլներով) /լվացքի, արդուկման և քիմմաքրման/: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի թղթյա պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 լրակազմ, տեսականին (յուրաքանչյուր լրակազմը) պոլիէթիլենային թափանցիկ պարկի մեջ, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման ամիսը և տարեթիվը: Արյան կարգերը և ասեղնագործ ուսադիրները առանձին փաթեթավորված և պիտակավորված: Մարտական համազգեստի ձևը և գոնավորումը, չափումների բնութագրին համապատասխանությունը ստուգելու համար, մինչ արտադրելը, Պատվիրատուին է ներկայացվում 3 լրակազմ (48/4, 52/3, 58/2 չափս-հասակի) արտադրանքի հսկիչ նմուշներ: Արտադրվում են 44/2 մինչև 66/6 չափս-հասակի: Պատվիրատուի հետ նմուշների ճշտությունը համաձայնեցվելուց հետո Կատարողին տրամադրվում է չափս-հասակային, արյան կարգերի և կրտսեր ենթասպայական (սերժանտական) ուսադիրների կոչումների քանակական տվյալները, ասեղնագործ խմբաքանակները արտադրելու համար: Անհրաժեշտության դեպքում

		հանդերձանքի յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, Պատվիրատուի պահանջով Մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի օգտագործված գործվածքների սերտիֆիկատները և/կամ բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված վերոնշյալ չափանիշների վերաբերյալ լաբորատոր հետազոտության դրական եզրակացություն: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 3% :